ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/51

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.05.2018թ. թիվ 03/26-3/8236-18 գրությամբ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 04.05.2018թ. թիվ 10/169 գրության հիման վրա, 08.05.2018թ. թիվ 03/26-3/8236-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Ֆարմեգուս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Ֆարմեգուս» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 25.05.2018թ. գրությամբ հայտնել է, որ առկա չեն հիմքեր Ընկերությանը ցուցակում ներառելու համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Ֆարմեգուս» ՍՊԸ-ն 12.04.2018թ. հայտ է ներկայացրել և մասնակցել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2018/15-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 19.04.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Կոմիտե) կողմից 19.04.2018թ. ստացված եզրակացությունը, որոշել է «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Սակայն, «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի կարծիքով տեղի է ունեցել սխալմունք, քանի որ Ընկերությունը 19.03.2018թ. ընկերությանը սպասարկող բանկի՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի՝ ԻնեկոՕնլայն ինտերնետային բանկային ծառայությունների համակարգով կատարված թիվ 708 և թիվ 709 վճարման հանձնարարականների միջոցով թիվ 900005600342 միասնական գանձապետական հաշվեհամարին կատարել է համապատասխանաբար 90 000 ՀՀ դրամի և 12 000 ՀՀ դրամի հարկային պարտավորությունների մարում եկամտահարկի գծով:

«Ֆարմեգուս» ՍՊԸ-ն նաև դիմել է Կոմիտե՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն 12.04.2018թ. (հայտ ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության կողմից հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ, համոզվելու համար, թե 12.04.2018թ. ունեցած ժամկետանց հարկային պարտավորությունները ինչքան են կազմել, և արդյո՞ք վճարված գումարը լիովին բավարարել է վերը նշված օրվա դրությամբ ժամկետանց պարտավորությունները մարված համարելու համար:

Ի պատասխան վերոգրյալ գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 1 բաժնի կողմից «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին 11.05.2018թ. տրվել է թիվ 1636 տեղեկանքը, համաձայն որի՝ Ընկերությունը 12.04.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ. եկամտային հարկի գծով՝ 97 800 ՀՀ դրամի պարտավորություն և 1679 ՀՀ դրամ տույժ:

Ընկերությունը նաև ունեցել է 728 188 ՀՀ դրամի դեբետային մնացորդ՝ ավելացված արժեքի հարկի գծով:

Վերոգրյալի ուսումնասիրության արդյունքում Ընկերության համար լիովին պարզ է դարձել, թե ինչպես է առաջացել եկամտային հարկի գծով՝ 97 800 ՀՀ դրամի պարտավորությունը և 1679 ՀՀ դրամ տույժը: Մասնավորապես, Ընկերությունը 20.03.2018թ. փետրվար ամսվա հաշվետու ժամանակաշրջանի համար որպես հարկային պարտավորություն պետք է ՀՀ պետական բյուջե մուծեր 106 625 ՀՀ դրամ որպես 2018թ. փետրվար ամսվա ԱԱՀ և 97 800 ՀՀ դրամ որպես 2018թ. փետրվար ամսվա եկամտային հարկ: Քանի որ Ընկերությունն իր հաշվին ունեցել է ԱԱՀ-ի մասով 759 497 ՀՀ դրամի գերավճար, իսկ մուծման ենթակա գումարը կազմում էր 106 625 ՀՀ դրամ, «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն իր բանկային հաշվին «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի՝ ԻնեկոՕնլայն ինտերնետային բանկային ծառայությունների համակարգով կատարված թիվ 708 և թիվ 709 վճարման հանձնարարականի միջոցով թիվ 900005600342 միասնական գանձապետական հաշվեհամարին կատարել է համապատասխանաբար 90 000 ՀՀ դրամի և 12 000 ՀՀ դրամի հարկային պարտավորությունների մարում եկամտահարկի գծով: Սակայն անհասկանալի պայմաններում և պատճառով Ընկերության կողմից մուտք արված 102 000 ՀՀ դրամը ուղղվում է ոչ թե եկամտային հարկի մարմանը, այլ ԱԱՀ-ի, իսկ ԱԱՀ-ի մասով մնում է 759 497 ՀՀ դրամի գերավճար: Քանի որ Ընկերության եկամտային հարկի մասով գումարը ուղղվել էր ԱԱՀ-ի մարմանը, այս պատճառով հաջորդ հաշվետու ամսվա համար եկամտային հարկի մասով Ընկերության մոտ առաջանում է 97 800 ՀՀ դրամի չմարված հարկային պարտավորություններ, որի վրա հաշվարկվում է տույժ՝ 1679 ՀՀ դրամի չափով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Այսպիսով, Ընկերությունը գտնում է, որ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (12.04.2018թ.) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չի ունեցել ժամկետանց որևէ պարտավորություններ, քանի որ էլեկտրոնայի համակարգի սխալ հաշվարկի պատճառով ընկերության մոտ առաջացել է հարկային պարտավորություններ, որը և դարձել է ժամկետանց:

Ընկերությունը կից ներկայացրել է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի՝ ԻնեկոՕնլայն ինտերնետային բանկային ծառայությունների համակարգով կատարված թիվ 708 և թիվ 709 վճարման հանձնարարականների և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 1 բաժնի կողմից 11.05.2018թ. տրված թիվ 1636 տեղեկանքի պատճենը:

Ընկերությունը խնդրել է հաշվի առնել վերոգրյալը և «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Ֆարմեգուս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/51 ընթացակարգի շրջանակներում 10.05.2018թ. ժամը 11:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 04.05.2018թ. թիվ 10/169 գրությամբ հայտնել է, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2018/15-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ է ներկայացրել «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովի 18.04.2018թ. թիվ 3 որոշմամբ 27-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն: 18.04.2018թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման վերաբերյալ: Գնահատող հանձնաժողովի 19.04.2018թ. թիվ 4 որոշմամբ արձանագրվել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 19.04.2018թ. տրված եզրակացության համաձայն՝ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացվելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների չափը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված շեմը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/51 ընթացակարգի շրջանակներում 10.05.2018թ. ժամը 11:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/51 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/51 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար կազմակերպվել է «ԳՀԱՊՁԲ-2018/15-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 12.04.2018թ. հայտ է ներկայացրել «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԱՊՁԲ-2018/15-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 19.04.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Ֆարմեգուս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 99 479 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.04.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացրած որոշմամբ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

5. Համաձայն «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի ԻնեկոՕնլայն ինտերնետային բանկային ծառայությունների համակարգով 19.03.2018թ. դուրս գրված թիվ 708 և թիվ 709 վճարման հանձնարարականների՝ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի կողմից 19.03.2018թ. կենտրոնական գանձապետարանի 900005600342 միասնական հաշվեհամարին եկամտային հարկի գծով կատարվել է համապատասխանաբար 90 000 ՀՀ դրամի և 12 000 ՀՀ դրամի վճարում:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 08.05.2018թ. թիվ 03/26-3/8236-18 գրությունը,

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 04.05.2018թ. թիվ 10/169 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե '

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի

կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար կազմակերպվել է «ԳՀԱՊՁԲ-2018/15-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***12.04.2018թ.*** հայտ է ներկայացրել «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.04.2018թ. ժամը 09:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերությունը Ընթացակարգի 27-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 18.04.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 19.04.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝

«Ֆարմեգուս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 99 479 ՀՀ դրամի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.04.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացրած որոշմամբ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

Այսպես՝ համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 19.04.2018թ. տրամադրված եզրակացության՝ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա (12.04.2018թ.) դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ ***99 479 ՀՀ դրամի չափով:*** Միևնույն ժամանակ, Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ՍՑ-ԱՄ-2018/51 ընթացակարգի քննության շրջանակներում ներկայացրել է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի ԻնեկոՕնլայն ինտերնետային բանկային ծառայությունների համակարգով 19.03.2018թ. դուրս գրված թիվ 708 և թիվ 709 վճարման հանձնարարականները, որոնց համաձայն՝ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի կողմից 19.03.2018թ. կենտրոնական գանձապետարանի 900005600342 միասնական հաշվեհամարին ***եկամտային հարկի գծով կատարվել է համապատասխանաբար 90 000 ՀՀ դրամի և 12 000 ՀՀ դրամի վճարում:***

Դրա հետ մեկտեղ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 1 բաժնի կողմից 11.05.2018թ. տրված թիվ 1636 տեղեկանքը, համաձայն որի ***«Ֆարմեգուս» ՍՊԸ-ն 12.04.2018թ. դրությամբ եկամտային հարկի գծով ունի 99 479 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որից 97 800 ՀՀ դրամը՝ վճարման ենթակա հարկի գումարի չափը, իսկ 1 679 ՀՀ դրամը՝ հաշվարկված տույժը:***

Նույն տեղեկանքի համաձայն՝ Ընկերության ավելացված արժեքի հարկի գծով դեբետային մնացորդը կազմել է 728 188 ՀՀ դրամ:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը,

բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ուսումնասիրելով «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի ԻնեկոՕնլայն ինտերնետային բանկային ծառայությունների համակարգով 19.03.2018թ. դուրս գրված թիվ 708 և թիվ 709 վճարման հանձնարարականները, որոնց համաձայն Ընկերությունը եկամտահարկի գծով 19.03.2018թ. կատարել է 90 000 ՀՀ դրամի և 12 000 ՀՀ դրամի վճարումներ, ինչպես նաև դրանք համադրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 1 բաժնի կողմից 11.05.2018թ. տրված թիվ 1636 տեղեկանքի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 19.04.2018թ. տրամադրված եզրակացության հետ, գտնում եմ, որ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ն «ԳՀԱՊՁԲ-2018/15-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել ստանձնած պարտավորություն, քանի որ Ընկերությունը Ընթացակարգին հայտ ներկայացնելուց առաջ 19.03.2018թ. կենտրոնական գանձապետարանի համապատասխան հաշվեհամարին եկամտահարկի գծով կատարել է համապատասխան գումարի վճարումները և համոզված լինելով հարկային պարտավորությունները ժամանակին կատարած լինելու փաստի մեջ, վերջինս 12.04.2018թ. հայտ է ներկայացրել «ԳՀԱՊՁԲ-2018/15-4-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով: Տվյալ դեպքում գտնում եմ, որ Ընկերության մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորության փաստի արձանագրումը պայմանավորված չի եղել «Ֆարմեգուս» ՍՊԸ-ի դրսևորած վարքագծով, ուստի հնարավոր չէ նաև արձանագրել Ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.05.2018թ. թիվ 03/26-3/8236-18 գրությամբ «Ֆարմեգուս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00108127) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**